

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

### ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, կայէնին՝ առաջին մարդասպանին եւ եղբայրատեսացին գործերուն ու պատուհասներուն մասին գրեցի անոր համար, որ գիտնաք, թէ ամէն մարդ որ իր եղբայրը, այսինքն ընկերը ատէ, մարդասպան է Կայէնի նման, որովհետեւ բոլոր մարդիկ իրարու եղբայր են ստեղծագործութեամբ։ Քրիստոնեաները ա՛լ աւելի եղբայր են, որովհետեւ միեւնոյն Աւազանին ծնունդ ըլլալով՝ երկնաւոր Հօր որդի են եւ ամէն օր կ'ըսեն. «Հայր մեր, որ երկինքն ես»։

Գիտցէք նաև այս, որ սպանութիւնը բազմապիսի ձեւերով կը կատարուի. ոմանք սուրով կամ այլ գործիքներով կը սպաննեն, ուրիշներ՝ դեւերով եւ այլ բազմապիսի հնարներով, իսկ ուրիշներ՝ մատնութեամբ պատճառ կ'ըլլան սպանման եւ մահուան, եւ այս բոլորին սկիզբը ատելութիւնն ու բարկութիւնն է։ Այս պատճառաւ մեծ աւետարանիչը՝ Յովիաննէս կ'ըսէ. «Ամէն ով, որ ատէ իր եղբայրը, այսինքն ընկերն ու հաւատակից քրիստոնեան, Կայէնին նման եղբայրասպան է եւ անոր անէժքն ու պատուհասը կ'ընդունի» (Ա. Յովի. Գ 15): Քրիստոս եւս Աւետարանին մեջ կը հրամայէ, թէ «Ան, որ զուր տեղ բարկանայ իր եղբօր, գեհենին պարտական է» (Մատ. Ե 22):

Արդ, ողորմեցէ՛ք ձեզի, խնայեցէ՛ք իրարու եւ մի՛ ատէք զիրար։ Մի՛ նախանձիք, ոխ մի՛ պահէք, մի՛ մատնէք, մի՛ զրկէք, մի՛ չարախօսէք մի՛ անարգէք, խոռվ մի՛ մնաք, մի՛ զարնէք, անողորմ մի՛ ըլլաք։

### ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ ԿՈՒԶԵՍ...

**ԵՐԲ ԿԱՏՈՒԹՈՅ ՀԱՇԴԵՂ ՔՈՒ  
ՎԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԿՈՒԶԵՍ  
ԱՐՏԱՅԱՅՑՏԵԼ, Կարդա՛ Սաղմոս 31  
+++++**

Ո՞վ Տէր, թեզի ապահինեցայ. թող ամօթով շմնամ բնաւ: Արդար ես դուն, ազատէ զիս: Ականջդ ինձի խնարհեցուր, եւ փութա, ազատէ զիս: ինձի պաշտպան, ապաստանարան եղիր, իմ փրկութեանս ապաստանը: Ին ապահին եւ իմ ամրոց դուն ես: Դուն ինքդ զիս առաջնորդէ եւ պաշտպանէ, որպէսզի քու անունի փառատրուի: Զիս դուրս թեր որոգայրէն, գաղտուր ինձի դէմ լարուած, որովհետեւ դուն ես իմ ապաստան: Զու ձեռքերուդ ես կը յանձնեմ իմ հոգիս, ո՞վ Տէր, Աստուած ծշմարտութեան, դուն որ փրկեցիր զիս: Դուն կ'ատես անոնք, որոնք սնոտին կուտքերը կը պաշտեն, մինչ ես ինքզինքս թեզի՝ Տիրոց վատահած եմ: Զու սիրովդ պիտի ցնծամ եւ ուրախանամ, որովհետեւ թշուառութիւնն տեսար, ճանչցար տառապանքներս, եւ զիս թշնամիին ձեռքը շմատնեցիր, այլ վտանգէն զիս դուրս թերիր եւ զիս ոտքի կանգնեցուցիր։

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եւեղիներու բանկալին մօս: Նաև՝ Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ԾՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար։

### ՅԱՍՅԵ

ՃՐԱԳ ՇԱԲԱԹՍԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - [facebook-h.tz jerak ՃՐԱԳ թերթ](http://facebook-h.tz jerak ՃՐԱԳ թերթ)

### ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՁՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ Խ ԾԱՒՇՆԵՐՈՒՄ ԼՂՅԱ  
(Ա. 119.105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ՅՈԿԵՏՄԵՐ 2020

ԹԻՒ 41

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՃԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 19.1-11: Գ. 2.1-10

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԵՏԱՐԱՎԱԾ ԸՆՍ ՍԱՐԿՈՍԻ 12.35-44

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԼԵՏԱՐԱՆԸ

ԸՆՍ ՄԱՐԿՈՍԻ 12.35-44

Յիսուս տանարին մէջ ուսուցանելու ընթացքին հարցուց ժողովուրդին. «Օրէնքի ուսուցիչները ինչպէ՞ս կրնան ըսել, թէ Քրիստոս՝ խոստացուած Փըրկիչը, Դաւիթի սերունդէն է, երբ Դաւիթ ինք Սուրբ Հոգիով ներշնչուած կ'ըսէ.»

«Տէրը ըսաւ իմ Տիրոցս. աջ կողմս մստէ, մինչեւ թշնամիներդ ոստերուդ տակ դմեմ որպէս պատուամդան»։

Եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս ուրեմն Քրիստոս անոր որդին է»։

Ժողովուրդը հանոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի, որ իր ուսուցումները շարունակելով կ'ըսէր. «Զգոյշ եղէ՛ք օրէնքի ուսուցիչներէն, որոնք կը սիրեն փառաւոր զգեստներով շրջի, հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիր բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին առողջները գրաւել եւ ընթիքներու ընթացքին՝ պատույ տեղերը։ Մէկ կողմէ այրիներուն տունները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն։ Անոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունին»։

Յիսուս կեցած էր տանարի գանձանակին մօտ եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր գանձանակին մէջ։ Նատ մը հարուստներ մեծ գումարներ նետեցին։ Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ նետեց երկու լումայ, որ հինգ դահեկան կ'ընէ։ Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց. «Վատահ գիտցէ՛ք, որ այս թշուառ այրին բոլորէն շատ դրամ նետած եղաւ գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց աւելորդ գումարներէն նետեցին, մինչ ան հակառակ չբաւոր ըլլալուն՝ ինչ որ ութէր նետեց, իր ամբողջ ապրուստը»։

## ՍԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՋԵՐ ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍՍՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐԺԵՆ  
19.1.11

Ահա Տէրը թեթեւագնաց ամպի վրայ նստած Եգիպտոս պիտի գայ: Անոր դիմաց Եգիպտոսի կուռքերը պիտի դողան, Եգիպտացիներու սիրտը պիտի հալի:

Եգիպտացիները Եգիպտացիներուն դէմ պիտի ելլեն, Եղբայրը Եղբօր դէմ պիտի պատերազմի եւ ընկերը՝ իր ընկերոջ դէմ, Քաղաքը Քաղաքի դէմ եւ Քագաւորներ Քագաւորներու դէմ:

Եգիպտացիներ իրենց հոգեկան կորով պիտի կորսնցնեն, որովհետեւ անոնց ծրագիրները պիտի խառնեմ, ուստի անոնք խորհուրդ պիտի ուզեն իրենց աստուածներէն ու կուռքերէն, ոգեհարցներէն ու փուլներէն:

Խստասիրտ տէրերու ձեռքը պիտի մատնեմ զիրենք, անգութ Քագաւորներ պիտի տիրեն անոնց, – կ'ըսէ Երկնային Զօրքերու Տէրը:

Եգիպտացիներ գետափնեայ ջրակոյտերէն պիտի խմեն իրենց ջուրը, որովհետեւ Նեղոսը պիտի նուազի ու ցամքի:

Նեղոսէն բացուած առուները պիտի Բահենանան եւ ամբողջ գետը պիտի ցամքի. բոլոր մարգագետինները, Եղիքնուտներն ու շամբուտները եւ մամուռով պատուած մարգագետինները պիտի չորնան:

Նեղոսի շուրջը անած ամէն կանաչութիւն, եւ գետեղին մշակուած բոլոր արտերը խորշակահար պիտի չորնան:



## ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒԻՆ


2.1-10

Այնուհետեւ, տասնընորս տարի ետք կրկին Երուսաղէմ գացի Բառնաբասին հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Գացի, որովհետեւ Աստուած յայտնեց որ Երթամ: Այնտեղ Երուսաղէմի Եկեղեցիին զեկուցեցի հեթանոսներուն մէջ կատարած Քարոզութեանս մասին: Առանձնաբար զեկուցում տուի նաև Եկեղեցւոյ ղեկավարներուն, որպէսզի իմ ուղղութեանս մասին իրենց հաւանութիւնը ունենամ, եւ զուր տեղ աշխատած չըլլամ եւ չաշխատիմ: Անոնք բնաւ չստիպեցին, որ թիվատուի ինծի ընկերացող Տիտոսը, որ հեթանութեանէ կու գար: Թիվատութիւն պահանջողները բանի մը կեղծ Քրիստոնեաներ էին, որոնք հաւատացեալներու շարքերուն մէջ սպրդած էին՝ Յիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու եւ մեզ Մովսէսական օրէնքներու ծառայութեան մէջ պահելու համար: Բայց վայրկեան մը իսկ տեղի չտուինք անոնց, որպէսզի վստահ ըլլամ թէ նշարիտ էր ինչ որ ձեզի Քարոզութեան:

Նեղոսի շուրջը անած ամէն կանաչութիւն, եւ գետեղին մշակուած բոլոր արտերը խորշակահար պիտի չորնան:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐՔ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ



Ս. Մեսրոպ Մաշտոց ծնած է Տարօն գաւառի Հացեկաց գիւղը: Սորված է Յունարէն, Ասորերէն եւ Պարսկերէն լեզուները: Հայոց Խորով Դ. քագաւորի պայտահիմ մէջ վարած է զիմուռական Քարտուղարի պաշտօն եւ նաճցուած է, որպէս գիտնական անձնաւորութիւն:

Աստուծոյ, ազգին ու Եկեղեցիին հանդէպ իր սէրը այնժամ վառ եղած է, որ Քագաւորական պալատը ձգելով դարձած է կուսակրօն Եկեղեցական եւ Առուրուած է Ս. Աւետարանի Քարոզութեան:

Ս. Մահակի նման, ինչն ալ իր շուրջը հաւաֆած է Երիտասարդ կրօնաւորներ եւ անոնց հետ շրջած է Հայաստանի զանազան կողմերը՝ Քրիստոսի լոյսը տարածելու համար: Իր շանքերը եղած են արդիւնաւաէտ: Իր Քարոզներուն շնորհիւ Գողթան գաւառի մէջ ջնջուած են հեթանոսական մեղսալի սովորութիւնները եւ մարդիկ աստուածապաշտութեան հետեւած են:

Իր Քարոզներուն ընթացքին զգացած է հայ լեզուի համար սեփական գիրերու անհրաժեշտութիւնը եւ ձեռնարկած է հայ գիրերու գիտիմ:

Ի վերջոյ աստուածային յայտնութեամբ կատարելագործած է իր աշխատանքները եւ ամրողացուցած հայոց այրութեանը: Ձեռնարկած է Աստուածաշունչի հայերէն Քարգմանութեան:

Ս. Մեսրոպ առաջին ուսուցիչն է հայ լեզուին եւ հիմնադիրը՝ հայ գրականութեան: Ինչն է հայերէն գրաւոր լեզու դարձնող ուսիշիրան:

Թարգմանչական աշխատանքի կողմին գրած է շարականներ, յորդորական բուլղեր եւ աղօթներ:

Մեսրոպ Մաշտոց եղած է հայ Ծիսարանի առաջին խմբագիրը, որ յետագային ունեցած է իր յաւելումները: Այդ գիրքը իր անունով կոչուած է «Մաշտոց», որ կը գործածուի մինչեւ այսօր:

Ս. Մեսրոպ Մաշտոց հայ գիրերու գիւղէն ետք հնարած է նաև Վրացիներուն եւ Աղուաններուն այրութեանը:

## ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր աստուածը, Քրիստոն, դուն առաջնորդէ՝ մեզ, որպէսզի արդարութեան քու ողորմութեամբ՝ Խաղաղութեամբ հանճնք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը, որովհետեւ դուն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի՞ կը վայելին փառքը, իշխանութիւնն ու պատիւր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: